

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԳԵՐՈՒԹԵԱՆ

ՀԱՐԻ ՊԱՐԿԵԱՅ Ի ՓԵՔԻՆ

ՈՐ ԵՂԵՒ ԴԵՍՊԱՆ Ի ՃԵՆՍ ԵՒ ՅԵՏՈՅ Ի ՃԱՐՈՆ

ՅԱՄԻՆ 1860

Ի գիշերի միում Կիրակէի հաւանեցողաբ զՀարրի պատմել զգերութիւն իւր յերկրին ճենայ 'ի փեքին: Եւ ա. սէ. ճենք խնդրէին խօսել 'ի խաղաղութիւն. և արձակեաց զիս իշգին իշխան Անգղիոցոց 'ի Տոնքոյ, իբր երկոտա. սան փարսախօք հեռի 'ի փեքինայ. հան. դիպել անդ երից աւագաց նոցա. Եւ խօսեցաք զխաղաղութենէ սիրելարար յոյժ. բազմադիմի յեղմունք պայմանաց թելադրեցան երկուստեք. յորինեցաւ յետկար, և առեալ զայն դարձայ առ իշգին. Ելգին այնպէս հաճ և հաւան գտաւ ընդ այն, զի իշխանութիւն ետ ինձ դարձ առնել, և կատարել զայն առ վաղիւ: Սակայն յայսմ նուագի շրջեալ էին գնացք աւագանոյն ճենայ հա. մակ, Հակառակէին ամենայնի. 'ի դէմն ածէին զիտոյ և զխուժ. և համառօտիւ ասացեալ, այնչափ հնարէին յապա. ղանս դժպհիս, զի նսեմաւ յանգ ել խօսակցութիւն մեր սկսեալ զմիջա. լուրբ: Յայնժամ անկ էր ինձ թղթել նախ առ Ելգին, և ապա առ սպարա. պետ իմ առ Հոպ Գրսնտ: Սահմանեալ էր որպէս մի 'ի նախաշաւիք պայմա. նաց, խաղալ նմա վաղիւ զօրօք անգ. դիացոց 'ի տեղի ուրեք հինգ փարսա. խաւ 'ի բացեայ 'ի փեքինայ, և անդ ըզ. կայ առեալ, մի ևս մօտել 'ի քաղաք անդր: Էր ժամ իբր չորրորդ առաւօ. տին, իբրև կատարեցի զգիրս իմ: Հարկ էր կանխել ինձ 'ի կայս նշանակեալ, առ 'ի զառաջս ունել վրիպանաց. և այնպէս խոնջեալ էի, զի ընկողմանել իսկ ոչ իշխէի, մի գուցէ յամէի 'ի քուն:

Եւ 'ի կալ յարթմունի խորհեցայ հեծա. նել յերիվար իմ, և ելանել զննել զտե. զին, ուր զօրաց մերոց անկ էր բանա. կել: Մինչդեռ անցանէի ընդ գաշտն հինգ փարսախաց, անյայտ ոտնա. ձայնք ձգեցին զուշ իմ. և 'ի միտ առի տակաւ, զի զօր բազմակոյտ խլրտէր դիմէր 'ի նոյն տեղի: Ի միտն անդ նըշ. մարել զնոսա և կամ զառաջնորդս նոցա ճանաչել զժուարին էր. այլ աստ անգ. հարցեալ զմանս, ընկալայ պատաս. խախտ կասկածաւորս: Ոչ ևս երկմը. տեալ զի զաւ նիւթէր մեզ, դարձայ 'ի Տոնքոյ. և ահա ընդ ծագել տոյգուն տեսի 'ի դաշտին, ուր երէկ և ոչ հետք երևէին մարդոյ, զբուրս բուրուց ճե. նաց. զի ճեպէին 'ի նոյն կողմն ամենե. քեան սպառազէն:

Ի մերձենալ իմում 'ի քաղաք անդր՝ զիպայ Լոք անուն բարեկամիս: Աստ յայտ լիցի, զի յար 'ի դէպս այսպիսիս գան ժիտք ոմանք և յանդգունք 'ի զնին անցից և 'ի փորձ վտանգաց: Բառաջ. նում երթին իմում հրաժարեցի առ. նուլ զոք ընդ իս. այլ յայսմ նուագի ժուեցին զիս և ասէն. Ձի ևս խիթալ. խաղաղութիւն մնայ մեզ. եթէ ճշմա. րիտ իցէ զօր ասեալ, չիք ևս վտանգ: Համոզեցայ, աւանդ, և եկին ընդ իս Լոք, Բրաբազոն և բարեկամ իւր, գաղղիա. ցիք երկու, բազում զրուցարարք օրա. գրաց և այլք, ընդ ամենայն արք իբր քսան և երեք: Եւ խնդրեցի 'ի Լոքայ անդէն սլանալ ձիարձակ, և հասանել զհետ սուրհանդակին այն ինչ արձա. կելոյ յինէն առ Գրսնտ, այլ անշուշտ

պատահել սպարապետին, և աղղը
նմա զգաւոյն խորհուրդ. և յաւելի. Ա.
սաաշիր նմա մի հաւատալ և ոչ իմիք՝
յորոց գրեցի. այլ գալ կազմ 'ի պա-
տերազմ: իսկ ես փորձեցայց ժողովիլ
զուղեկիցս մեր, զի 'ի լուսանալ աւուրն
և 'ի տեսանել զմեզ լծնամուրն, վտան-
գեացին կեանք մեր աներկբայ: Լոք ել
արշաւասցոր. և ես փութացայ հետա-
զօտել զվտանգակիցս մեր. ողբ զի հե-
տաքբիրք և ցիրք 'ի միմեանց շրջէին,
անկաւ աւելի քան զժամ մի, մինչև
'ի մի վայր եկեալ ամենեցուն:

Յուշ եղև ինձ յայնժամ, զի չև եր-
թեալ առ Ելզին, պարտ էր ստուգել
ինձ զվանէրն այսր յեղակարծ յեղա-
փոխութեան. և լուեալ զի ճեն ոմն ա-
ւագ առաջնորդէր զօրուն անդր քան
զքաղաքն, ընթացայ տեսանել զնա. և
առնուլ բացատրութիւն: Այլ 'ի հենդ-
նաւոր և 'ի պատ 'ի պատ. պատասխա-
նեաց նորա ծանեայ և ոչ ինչ: Խորհեցայ
յայնժամ յաւագսն երեսին. և դարձայ
'ի քաղաքն: Այլ մեկնեալ էր նոցա,
գէմ եղեալ 'ի փեքին: Պնդեցայ և հա-
սի զհետ նոցա. բայց նոքա 'ի պատաս-
խանի յանդիմանութեանց իմոց՝ ծաղր
և եթ առնէին զինն. Յայս վայր ձիա-
վարեալ էր մեր ընդ ամբոխ սպառնա-
լից. որ 'ի զկայ առնուլ մեր ուրեք,
պատեալ զմեօք, մռմռայր և կրճտէր
զատամուռն: Միակ մեր տապաստն էր
անդադար փոփոխել զկայս. սաստն-
գեալ ձիարշաւ, չև ուրուք յարձակեալ
'ի մեզ. Բայց արդ ժամ էր մեզ ելանե-
լոյ 'ի բաց. և մեկնեցաք փորձել մեզ
անցս ընդ դաշտն հինգ փարսախաց:
Ի ամին պահու պատահեցաք Լոքայ. որ
մեծախոհութեամբ դառնայր ըստ խըն-
դրոյ Գրանտայ, ճեպել զմեզ 'ի դարձ:
Գրանտ ոչ կամէր յարձակել մինչև
ընդ կեանս մեր լեալ աներկեան. այլ
ձենք թուով իրր քառասուն հազար
այր, այնպէս գրգռեցան 'ի տեսիլ մե-
րոցս երկց հազարաց, զի հեծելագունդ
նոցա անսաստեալ հրամանաց, սկիզբն
արարին մարտին, և պաշարեցին զմեզ
անպէն, և կալան:

Ի զուր յայտնէաք նոցա թէ մեք
պատգամուորք էսք խաղաղութեան.
Թէ յունել նոցա զմեզ, վրիպակ աղե-
տաւոր գործէին: Խնդրեցաք յանդի-
ման լինել սպարապետի նոցա. և այսմ
միայն հաւանեցան: Սկիս ոմն ած զԼոք
և զիս յանտառ ուրեք. ուր կայր սպա-
րապետ նոցա Սանկլինսին անուն: Ի
մտանել մեր յանտառ անդր, ընդօստ
կացին որեար բաղմահոյ 'ի տեսիլ մեր.
և կշռեալ 'ի մեզ զհրազէնս իւրեանց,
ձայնեցին առժամայն իմանել մեզ յե-
րիվարաց: Մնօգուտ էր ընդդիմութիւն.
վասն որոյ հնազանդեցաք: Ի քթթել
ական կալան զմեզ, կապտեցին յամե-
նայնէ, գրեթէ մերկեալ լծնամանե-
ցին, կոփեցին և տապաստ արկին ա-
ռաջի սպարապետին. որ այլ ընդ այ-
լոյ դատեալ զմեզ, հրաման ետ մեզ
զադարեցուցանել զմարտն իսկոյն: Այս
տի խելամուտ լինէաք՝ զի ձենք թէ և
թուով բաղմագոյնք, ձախողէին իրք
նոցա: Չարեցաւ Սանկլինսին՝ իբրև
ծանուցի նմա զի ես առնեազպիր և եթ
էի յելզինայ, և ոչ կարէի կասեցուցա-
նել զմարտն. և 'ի յղել իսկ իմում պա-
տուէր այնպիսի՝ ապախտ լինէր այն:
Յայնժամ յետ այլ ևս կոփանաց արկին
զմեզ ճեպով 'ի սայլ և վարեալ յայլ
կողմն դաշտին՝ ձգեցին անդ ընդ քարշ
դարձեալ 'ի հարցափորձ առաջի այլոյ
ուրուք սպարապետի. որ 'ի զրաւել ըզ-
քննութիւն իւր՝ հրամայեաց համա-
ռօտիւ՝ գլխատել զմեզ անգէն. Նոյն
հետայն կապեցին յետս ղճեռս մեր
ուժգնապիրկ. արկին զմեզ 'ի գուճս.
դահիճ սուսերամերկ առնիթեր կայր
կազմ 'ի հարկանել. ողլունեցաք զմի-
մեանս շտապաւ Լոք և ես՝ 'ի հրաժեշտ
յետին. և ահա յանկարծ արք ոմանք
խոյանային 'ի մեզ թաւալզլոր փոթոր-
կեալք՝ տապալելով զմեզ, տապալելով
և զդահիճս մեր, և ապախտեալ տա-
նելով զամենայն ինչ:

Յայնքան մերձելոյ մահու ապշեալ
ջրասեցաք ընդ անանկալ կասել նո-
րին. դարձեալ ձգեցաք 'ի սայլ, որ
ցունցս տալով գնայր և ճունչէր ընդ

խորտաբորտս, ածեալ մեզ ցաւ անհնարին. զի ձեռքը յետս կապելովք, կռփեալք և կոյկոճեալք, ոչ կարէաք պահ ունել անձանց, և կամ՝ ՚ի թափոյ անդադար տատանման զգուշանալ. այլ գոհանայաք ընդ ցայս վայր ճողոպրել մեր ՚ի մահուանէ, զոր ական յանդիման տեսաք:

Աստանօր գիտելի լիցի զի հէքն Բրաբազուն և բարեկամ իւր զխատեցան իսկ ՚ի դաշտին: Եւ այլք յուղեկցաց մերոց գողցեն ամենեքեան կատարեցան դառնամահ, ոչ ՚ի խոշտանգանաց, այլ զի այնպէս պրկեալ էին յետս ձեռք նոցա, զի քաղեցան ոգիք նոցին:

Ուր ուրեմն հասաք յուղին՝ որ ածէ ՚ի փեքին. ուր ՚ի խռանէ փախստէից հարկ լինէր մեզ յուշիկ ևեթ գնալ: Զօրն ողոյն չէր մեր առեալ կերակուր. արեգակն բոցակէզ հարկանէր ՚ի մերկ մարմինս մեր. պապակէաք ՚ի ծարաւոյ, և ՚ի զուր պաղատէաք զչրոյ: Ի կալ մեր ուրեք վայրիկ մի, զննէին զինուորքն զկապանս մեր և ուժգնագոյնս պրկէին. և տեսանէաք ուռուցեալ և կապուտակեալ զձեռս իրերցայ ՚ի մուտս անդ պարտանցն ընդ միս մեր:

Խեթիւ հայեր՝ ՚ի մեզ և փախստէիցն իսկ ամբօխ. և հետ ընդ հետ չուրջ եղեալ զմեզ՝ թնամանէր և կռփահարէր զմեզ. և յամենայն պահու մնայաք մահու: Եւ քանզի յամր գնայր սայլ մեր, ՚ի տասներորդ ժամու գիշերոյ հասաք ՚ի դուռն փեքինայ: Անցեալ ընդ դուռն և ընդ փողոց քաղաքին, դարձաք ՚ի տուն ուրեք մեծատեսիլ, լի արամիք և ջահիւք. որում էր վերագիր չարաշուկ: Ատեան պատժոց, իմա տանջանաց: Աստանօր թողին զմեզ առ վայր մի, մինչև ապա հրաման ետուն ինձ իյանել ՚ի սայլէն: Աղերս արկի նոցա մի մեկնել զմեզ. այլ ՚ի զուր. վասն որոյ հրաժեշտ առի միւսանգամ ՚ի լուքայ: Զար ևս էր նմա քան ինձ բաժա. նումն մեր, քանզի չկարէր խօսել ճեհարէն. այլ խնդրեցի ՚ի նմանէ մի վհատել, զի ունէի հնարել ընդ նմա լինել վերստին: Եւ ածայ ես ապա ընդ էլս

միինս ՚ի վիհ ահեղ, ուր թուէր բացեալ երկրի առաջի իմ անդնդախոր: Սուղեալ ՚ի վիրտպս յայս լի տառապելովք, եղայ ՚ի դարդիճ փայտեայ, ոտ, նաչափ ՚ի վեր քան զերկիր. լուծան ձեռակապք իմ. և պրկեցայ յանուր երկաթի պնդեալ ՚ի գերան կշիռ ՚ի վերոյ զլնոյս: Չեռք իմ և ոտք պարաւանդեցան ՚ի չղթայս ծանունս. այլ բազուկք իմ ոչ ևս էին յետս կաշկանդեալ, և այս դուր անճառ՝ կեցոյց զիս: Թուի ինձ անզգայացեալ յայնժամ, զի ոչ ևս ինչ յիշեմ. մինչև յետ սակաւ միոյ արձակեալ ՚ի չղթայից, վարեցայ պլուր ՚ի հարցուփորձ, ՚ի նկուղ նսեմ և յարդարեալ յազդել զարհուրանս: Անդ բազմէին ՚ի բարձու դատաւորք հինգ, պար առեալ ՚ի պաշտօնէից և ՚ի զինուորաց. և դահիճ բազումք օգնականօք հանդերձ յօտին կային առ ինչ: Էր անդ տեսանել զերկրաւ տան. ջանարանս պատրաստեալս թերևս յահարկանել յիս. և յուզի իսկ սիրտ ՚ի մերձենալ այսպիսի վտանգաց: Եւ սկըսան մանր հարցափորձել զիս զհամարոյ զօրաց մերոց. զոր խորհրդով իսկ ոչ ինչ նուազեցուցի, տալով նոցա միա համուռ. և զթիւ վաճառականաց և այլոց ամենեցուն՝ որ զհետ երթային բանակին. ուր նոցա զօրս վարկուցեալ զամենեսին՝ դժկամակեցան ականերև: Զայն իբրև տեսի, յաւելի ասել թէ դիւրին էր մեզ հայթայթել և յաճախել զօրս ըստ կամի: Զայրացան ընդ խօսել իմ զգլխոյէ մերմէ, և ասեն. կոչեալիք զնա կին աւագ. և դիտաւիլիք, զի որ թագաւորէ ՚ի վերայ երկրի՝ ինչքանակալն է միայն ճշնաց: Ի տհաճել նոցա ընդ պատասխանիս իմ, ականարկէր դահճացն ոմն ՚ի դատաւորաց. և հարկանէին և լլկէին նոքա զիս. այլ այս ամենայն թուեցաւ ինձ ըստ կանոնի նոցա գործեալ: Էր զի ճողէին զհերս և զմիւրուս իմ. և էր զի գեղոցս յաչս իմ շրջիջէին՝ առ ՚ի զարհուրեցուցանել զիս: Եւ ՚ի զրաւ առնել այսմ դարձադարձի տառապանաց՝ խորհեցայ կեղծաւորել զթալուկ, և անկայ նուաղեալ.

այլ այնպիսեալ զժնդակ զեղով ընդոս-
տուցին զիս 'ի զգաստութիւն, մինչև
ոչ ևս փորձել ինձ զայն միւսանգամ:

Դարձուցին ապա զիս յարգելան իմ
գետնափոր, և ետուն ինձ նկանակս
գարեղէնս և ջուր յերմ: Եւ ամենայն
կալանաւորքն բմպէին ջերմ ջուր. զի
վատառողջ համարի ջուր ցուրտ առ-
ձենս: Անձուկ էր արգելանոցն և հա-
զիւ բաւէր արանց տասանց. այլ կային
անդ կալանաւորք աւելի քան զվաթ-
սուն և չորս, և կէսք 'ի նոցանէ զամս
բազումս: Զէին նոքա իբրև զիս 'ի չըզ-
թայս, և ոչ յոգունք 'ի նոցանէ բիրտ
և անկարեկիր: Ոմն 'ի նոցանէ, որ կար-
ծէր պրկանս կրեալ 'ի մէնջ՝ կըրէր և
լուտայր զիս. այլ ըստ բախտի ծաղրա-
սէր են ձենք. և վաղ պարտեցի զնա
ծաղրու: Ի տուն զօգս առնուպք ընդ պա-
տուհան վանդակապատ, որ հայէր 'ի
բակ փոքրիկ. այլ գիշերի ձգեալ պա-
տուհանին, հարկանէր անդ հոտ ժա-
հու անրմբերելի, որով թուէր արբե-
նալ ամենեցուն:

Զաւուրս եօթն ստէպ հարցափոր-
ծեալ, հնարեցայ հանապաղ կարծե-
ցուցանել նոցա՝ թէ դուզնաբեայ դը-
էի ես, թափուր 'ի զօրութենէ և յիշ-
խանութենէ. զի անգիտանայիցոր վայր
մարթէր ինձ ունել զկար և զմիտս իսկ
'ի տոկ. և զինչ ոչ ստիպէի ասել՝ եթէ
'ի խոշտանգանս մատնէր մարմին իմ
տկար: Ի միւում առւորց եկին և ասեն
ինձ գրեւ զիր առելքին. և զեղայ խըն-
դութեամբ: Իբրին քարտէս և բրիլ, և
նստան մօտ 'ի մօտ առ ինև. հազիւ թո-
ղեալ տեղի ոտնաչափ վասն գրոյն. որ-
պէս զի հսկեսցեն ամենայն գծից, զոր
գծել ունէի: Եւ սկսայ գրել. է՛հ, կաց,
մնա, ասեն. ճենարէն գրեալի: Ասեմ՝
զուր ուրեմն գրիցեմ. զի ոչ կարասցէ
ելզին ընթեռնուլ զայն: Պատասխանի
ետուն. քեզ զի փոյթ. գացէ նա թարգ-
ման զոք: Լուայ և սկսայ գրել զթուական
թղթոյն. Ատեան պատժոց: Զայն բար-
ձին վերստին. Կաց, մնա, այդմ չմար-
թիս այդպէս. շատ իսկ եղեր դու 'ի ձե-
նառտան առ 'ի գիտել թէ հակառակ է

պատշաճից՝ խօսել զբանտից, զպատժոց
և զտոցին սակի իրաց: Ասեմ՝ Պարտ
իսկ է 'ի ճակատ ամենայն թղթոց նշա-
նակել զտեղին՝ ուստի գրին, և ինձ
գրել է միայն անտի՝ ուր կամս: Այլ
այն չէր և չէր նոցա հաճոյ, և խնդրէին
գրել ինձ միայն զի մեք ողջ էաք. և զի
քաղցրութիւն առնէին նոքա ընդ մեզ,
իբրև ծանեայ՝ զի ոչ կսին բնաւ զի-
տել բարեկամաց մերոց զլինել մեր 'ի
բանտի, յամառեցայ և ես. և ասեմ.
Ոչ այդպէս. եթէ հաճոյ թուեսցի ձեզ
օթեանել զիս յարքունիս, դրոյմեցից
և ես խնդամիտ զարքունիս 'ի դուռն
գրոյս. այլ 'ի բանտէ՝ բանտիւ է սկսա-
նել թղթոյս: Զաւուրս երկուս վիճէին
զայսմանէ. և իբրև տեսի յայս յեցեալ
զհանդերձեալս մեր, եղի 'ի մոի մի
տալ տեղի: Հուսկ յետոյ յանձն առեալ
հանել զիս 'ի բանտէն, ուր էի զաւուրս
ինն, և լուծեալ զյղթայս իմ՝ տարան
զիս 'ի փոքրիկ մեհան ուրեք բոլորա-
չէն, չրլափակեալ անգաստակաւ. և
ասեն. Ահա մարթի քեզ գրել թէ սի-
րով զնամք մեք ընդ ձեզ: Իսկ ես ետու
պատասխանի. Եւ զի եղև բարեկամս.
մեռեալ արդեօք իցէ նա. ածէք զնա
առ իս և կամ զիս առ նա. զի գրել
կարացից թէ մեք ողջ եմք: Սուգ ինչ
վարանեալ նոցա, հաւանեցան ապա և
ընդ այս. և ահա եմուտ Լոք առ իս:
Ի միտ առ քանի գոհանայաք մեք ընդ-
դարձ մեր առ միմեանս:

Յայնժամ սկսայ զգիր իմ, զորոյ զըն-
նէին նոքա զամենայն բառ մանրախու-
զիւ: Ոչ գրեցի զամենայն՝ զոր ցան-
կային, այլ զայն միայն՝ զի ողջ էաք և
մարդասիրեալ 'ի նոցանէ. որով չէր
բարեկամաց մերոց հասու լինել թշուա-
ռութեանս մերում: Յաւելի ապա թէ
անգրիներէն էր սոորագրել զանուանս
մեր 'ի թղթին. որպէս զի հաւատայր
ելզին 'ի մէնջ ելեալ զայն. սակայն
ընդդէմ դառնային և այսմ: Ի վերայ
ածի յայնժամ, թէ Սն անդր, մի յղես-
ցի ուրեմն գիրդ վայրապար: Լուան
ինձ ապա. և գրեցաք զանուանս մեր
Լոք և ես՝ լի բովանդակ 'ի գծածս մե-

ծամեծս, գծագրեալ զնորօք պատգամ՝
ինչ 'ի լեզու հնդկի՝ անհաս 'ի նոցանէ,
անկիրթ ախան սեթեւեթ եւթ երեսեալ:
Զաւուրս եօթն ոչ ընկալաք պատաս-
խանի: Զէաք 'ի կապանս. այլ զինուորք
գտիւ և զգիշեր անմեկինք 'ի մէջ պահ
ունէին մեզ 'ի նմին խղի: Ի խնդրել
մերում զրոյց՝ պատմէին մեզ նորա թէ
սպառնապետ՝ հարաւ բանակ մեր, թէ
բարեկամք մեր գտին զանկն իւրեանց՝
զի ջննցան յերկրէ: Էւ գիտել ինչ ոչ
կարէաք և ոչ 'ի կարծ:

Լուաք ուր ուրեմն զի հասեալ էր
գիր ընդ ծրարի միում՝ զգեստուց, զոր
խնդրեալն էի. և կարօտեաք նմին չա-
րաչար: Էւ էր նամակն ըստ մերումս
ճննարէն գրեալ հակիրճ և զգուշաւոր
բանիւք. ուր և ասէր յուսալ հաշտու-
թեան, միայն եթէ ձեռն արդար պայ-
մանօք խօսեցան: Այլ զգայաք զուանդ
իմիւք աւելի քան զայս. և անձկով բա-
ցաք զծրարն. և զճորձան ագաք, և ոչ
գտաք անդ ոչ պիտակ և ոչ այլ ինչ:
Երևէր իսկ կանխեալ բացեալ նոցա
զծրարն, և յուգեալ զայն. և չէր մեզ
մարթ մանր քննել զամենայն, զի զի-
նուորքն միշտ 'ի մտոյ ուշ գնէին մեզ:

Զայն զիշեր ըմբռնեցայ ես 'ի սաս-
տիկ թանկաւ. խիթք զորովայն իմ կե-
ղեքէին. հեծէի, կծկէի, ճչէի և գոչէի
ածել զիս 'ի բացալայր. զի հեղձանէի
'ի փակ օդոց: Հանին զինուորքն զիս
յանդատակ անդր, ուր այնչափ զայ-
րացան խիթք իմ և հեծութիւնք՝ մինչև
խռնել զինև ամենեցուն խռովեալ, և
կարծել թէ փչէի զոգի: Էւ ահա լուայ
զմիմանիլ լոքայ: Եւ ծանեայ գտեալ նմա
զոր խնդրէին: Բայնմ պահու փարա-
տեցան սքանչելապէս խիթք իմ պա-
տիւք, և ազդ արարեալ զապաքինու-
թիւն իմ, իրրև մուծայ անդրէն՝ զե-
կոյց նա ինձ զի գտեալ էր զպատգամ,
կարմիր ատղանեաւ յեռեալ 'ի տտան
միոյ 'ի շապկացն. քանզի Յովհաննէս
Հէ այր գերամեծար ուսեալ էր 'ի մօ-
րէն զասղնէգործ. և լուաք ապա՝ զի
մինչ այլք 'ի բանակին յօրինէին զգիրն
առ. մեզ զգուշաւոր, նա նստեալ 'ի

գետեղեր՝ գործէր ասղամբ զպատգամն
զայն գաղտնի. որոյ այս էր պատճէն.
Յերիւր աւուր յարձակեսցուք մեք. ուր
էք գուր:

Գիտեաք զի յարձակումն այն, զոր
շապկին ազդէր, 'ի վտանգ անհնարին
արկանէր զկեանս մեր. և անցեալ իսկ
էր երկուցն՝ յերից աւուրց անտի:
Սպարապետ ձեռնաց Հոնքչի աւուր ա-
ւուր ընդ այլ պաշտօնեայս այց առնէր
մեզ, յաճախեալ հարցուածս և սպառ-
նալիս: Բողոքէաք առ նա սրտառուչ,
և հոյցէաք հրեշտակս արձակել առ 'ի
զառաջս առնուլ յարձակմանն գուժե-
լոյ: Իսկ նա ասէր. Զեզ պարտ է ար-
գելուլ զայն: — Բայց մեք 'ի կալանս
կամք. ոչ գոյ մեզ կար և ոչ իշխանու-
թիւն: Այլ զուր բանք. ոչ հաւատալին
մեզ. և հանապազօր նովին գփփմու-
թեամբ պարտասեցուցանէին զմեզ, և
ասէին. Նախկին ճայթիւն հրեաի լիցի
'ի նշանակ արկանելոյ այդք զպարբա-
պան զգլուխս ձեր: Էւ որպէս ոչխարք
'ի սպանդ՝ սպասեաք սատակման: Յա-
ւուրն երրորդի լսելի եղև բոմբիւն հրե-
տի. և Հոնքչի զիմեաց առ մեզ տագնա-
պաւ. Ալէք լսէք զայն, և զի առնիցէք
արդ: Ապաքէն ոչ ինչ էր առնել. այլ
նոյն տեսարան ցամանս յանգիման լի-
նէր որպէս յառաջագոյն: Բայց ըստ
բախտի ոչ 'ի յարձակումն ճայթէին
հրեաք, այլ յողմունել և 'ի ցուցանել
Գաղղիացուց զկայս բանակի մերոյ. զի
մացառք բարձունք ծածկէին զնոսա 'ի
մէնջ: Էւ էր իսկ նոցա հատեալ անցեալ
զողջեսն կշիռ ընդ բանակ մեր: Զի կային
նորա նախ 'ի ճախմէ մերմէ. և յայտ
եղև յետոյ, զի յորժամ յարձակէաք
մեք 'ի փեթին, նորա փարսախաք 'ի բա-
ցէ յաւար առնուին զամարատան ար-
քունիսն ընդ ալմէ մերմէ:

Պահանորդաց մերոց ցածուցեալ էր
տակաւ 'ի ցամանէ. այլ յայսմհետէ
յաւելուին օր քան զօր յատելութիւն
մեր. և 'ի գծնեայ զիմաց ամենեցուն՝
որ մատչէին առ մեզ տեսանէաք ծան-
րացեալ զվտանգ մեր: Ի միում աւուրց
ազդ եղև մեզ շտապաւ, զի վաղիւ վեր-

ջին հասանէր մեզ օր, և զի շնորհեալ էր մեզ գրեւ առ բարեկամս, եթէ կամէաք: Ապաքէն ժամ 'ի ժամ ակն ունէաք օրհասի, այլ ընդ գոյժ նորին սարսափ ընդ ոսկերս մեր ընթացաւ: Եւ գրեաց լոք առ մայր իւր, և ես առ կին իմ՝ գերկայն ողջոյն հրաժարական: Չմտաւ ան զտուայտանս մեր: Խնդրեցի զոր բարձեալ էին յինէն զմահիկ իմ առ 'ի ծրարել 'ի թղթիս, և դարձուցին զայն առ իս. և զթուղթս մեր տարան 'ի բաց: Չայն գիշեր համարէաք վերջին մեր. և արդարև դառն էր զգալ, զի ամենայն տառապանաց մերոց այսպիսի մնայր վախճան:

Ի վաղիւ անդր յերևան եկն Հոնքչի զօրէն հանապազօր. և նախաբանեալ ինչ՝ անց արագ զինև. և իբր թէ անլուր այլոց չնշեաց յունկն իմ. Ազատեցի՛ք այսօր: Այլ մեք 'ի չար միտս միայն հանաք զբան նորա, այն զի յուզեալ ամբոխին զայրագին՝ ամենայն դե ամհաբարս ոտնհար լինէր մեզ. որպէս յառաջնում իսկ առուր գերու թեանս մերոյ:

Եւ ահա սայլք երկու եկին մօտին 'ի բակ անդր. և հրաման տուաւ մեզ լոքայ և ինձ՝ ելանել իւրաքանչիւր 'ի մի: Եւ ասեմ՝ ցլոք. Չանգիտեմ զի վճարեալ է արդ ընդ մեզ: Ապա դարձայ 'ի Հոնքչի, և խնդրեցի թողուլ մեզ միտանել երկաքանչիւր 'ի նոյն սայլ, խուտացեալ ոչ ինչ աշխատ առնել զոր: Ուր ուրեմն հաւանեցաւ ընդ այն. և յայնժամ չըլեցաք զայն առաջին նուազ 'ի տուն ընդ փողոցս փեքինայ: Գնայաք յուշիկ 'ի դուռն արտաքին. խոնէր ամբոխ 'ի փողոցս, և խուժեալ զսայլիւ մերով՝ սպառնացս հետ ընդ հետ կլա. նել զմեզ: Քաղաքին են բազում դրուռք, ամբողջինք անբաւք, զորովք ամբառնան մէն մի բրգունք բարձրաբերձք. և ընդ սօսին և ընդ դուռն արտաքին՝ անյրպեա ընդարձակ, յորում սպանանին մահապարտք:

Անցեալ ընդ դուռն այն, զկայ էառ 'ի բացավայրի անդ սայլ մեր ճանչելով: Ոչ ևս երկմտեալ թէ հուսկ յետոյ

հասեալ էր մահ, կալաք զձեռանէ մի. մեանց պնդապէս. և միւսանգամ ողջոյն հրաժարական տուաք իրերաց ողորմագին: Եւ լոքայ աղօթամատոյց փոքրիկ, որ սփոփեալն էր զմեզ 'ի կալանս յոյժ, բարձին զայն 'ի նմանէ 'ի սկզբան. սակայն զարմանալեօք իմն անյայաղ 'ի խնդրել նորա՝ դարձուցին զայն: Եւ սկսաք ընթեռնուլ 'ի միասին զմաղթանս հանգստեան. այնպէս խորասուզեալ յաղթս, մինչև ոչ զգալ որ ինչ անցանէր շուրջանակի:

Եւ յանկարծ ազգումն ուժգին հանգոյն երկետրական թափոյ ընդ անդամս մեր գնայր, որ թուէր դարձուցանել զմեզ և 'ի դրանց անտի դժոխոց 'ի կեանս: Հոլովէր խաղայր սայլն յառաջ 'ի պարիսպն արտաքին, ընդ դուռն արտաքին. և գտաք անդանօր սրտաբախ, սրտաթունդ, ուր ոչ դե էր բաց 'ի սայլորդէն. և 'ի բազմութենէ ճննաց ըզպարսպօք վաթսուռն ոտնաշափ 'ի վերոյ մեր: Հարցի զսայլորդէն և ասեմ. Յո՞ տանիցիս զմեզ: Պատասխանին ետ զայրագին. Յո՞վ և կամիցիք. — Ընթաւաք 'ի բանակն Անգլիացւոց, ընթալ թեթև. ընթաւ. — Ուր է այն. — Քեզ առաւել է գիտել զայն: Վարանեալ սուղ ինչ սայլորդին, դարձաւ շտապաւ յահեկէ յարահետ անդր, որ գնայ ընդ քաղաքին պարսպօք: Ի զուր թախան. ձէաք աճապարել. յոռի էր գրաստ մեր. և սայլորդն չկարէր կամ չկամէր երագել գնա քան զճեմս:

Ճանապարհ մեր մղոնս իբր երկուս աղամուղէր առ պարսպօքն անտառացելովք սպառազէն թշնամեօք. յորոց մարտէր ումեք ըստ կամի հարկանել զմեզ հրազինուք, և յեղակարծում արծաթմանէ 'ի մեզ յուսոյ կենաց և ազատութեան, ոչ ևս հանգարտեաք այսմ յուշիկ տուայտանաց. և ժտէր գիս լոք ելանել 'ի սայլէն. Յանուն երկնից իջուք աստի. և փախիցուք արչաւակի: Եւ յո՞ փախիցուք, ասեմ, ո՞ բարեկամ. անգիտանամք զկայս Անգլիացւոց. և զհեռաւորութիւն նոցա 'ի մէնջ. անդիտանամք և զայն՝ զի ծունկք մեր կթու-

ցեալք և կարկամեալք յերկայն կապա-
նաց՝ կարիցեն ընթանալ: Դարձեալ և
դոյզն ցոյց կասկածոյ մերոյ զորեացէ
զճենս ձեռն մխել 'ի մեզ: Կացցուք
մուսայոսք ըստ կարի 'ի սայլիս. և 'ի
զայրանալ վտանգին՝ ապա ապաւինես-
ցուք յարագութիւն ոտից մերոց:

Եւտոյ ուրեմն մեկնեալ սայլին 'ի
պարսպաց անտի դէպ ուղիղ 'ի բաց,
ոգի առաք յաներևութանալ նոցա: Եւ
զնացաք զճանապարհ մեր հարուստ
մի, ոչ յակն անկեալ Անգղիացւոց. այլ
զոհանայաք զի ոտնփոխ իւրաքանչիւր
'ի բաց տանէր զմեզ 'ի փեքինայ: Սա-
կայն 'ի վերայ կային մեզ այլ ևս ա-
ղէտք. զի հարաւ յունկն մեր տրոփին
երկմարաց յետկուսէ: և ահա գունդ
հեծելոյ, զի սրավարեալ 'ի քաղաքէն,
զիմէր գայր մերձենայր որպէս փոթո-
րիկ. և մոլեղին աղաղակ բարձեալ,
նշանացի հրամայէր մեզ զկայ առնուլ:
Ստիպէաք անդրէն զվատուէր սայլորդ
մեր աճապարել. այլ նորա ոչ գոյր ա-
կանջ. և 'ի թարթել ական՝ հասին հե-
ծեալքն, շուրջ եղեն զմեզ, և խօսել
կալան ողջում: Սոսկային լսել առանց
նախաճաշոյ արձակեալ զմեզ 'ի փեքի-
նայ. հակառակ հրերոյնց համարէին
զայն. այլ կային անդ հիւրք զճանա-
պարհայն, և եթէ իջնէաք 'ի նոսին,
լնուին անդէն զքաղց մեր:

Դռնեաք ապա՝ զի ընդ փախել ինք-
նակային 'ի փեքինայ, յուշ ածեալ, զի
թողոր զհետ զանգղիացի կալանաւորս
երկուս, յուշ ածեալ և զառածն թէ
լռեն մնռեալք, յղեաց հրաման ան-
դարձ յուղարկել զմեզ անպապող 'ի
սանդարամետս: Հոնքի առեալ զհոտ
այտորիկ և յայլ պատճառաց յորդո-
րեալ, կանխեաց ազատել զմեզ. զի 'ի
հասանել հրամանին՝ ոչ ևս գոյր հնար:
Եւ հասեալ էր այն անդր ընդ մեկնել
մեր անտի. և հեծեալքն արձակեալ
զհետ մեր՝ առ 'ի կատարել զայն: Սմին
իրի դժնդակագոյն էր յայնմ պահու-
վտանգ. մեր քան յամենայն գերու-
թեան մերում: Աղաղակեաք անշուշտ՝
զի չէաք անսուաղ, զի յազեալ իսկ էաք

կշտապինդ: Նոքա աղերս բանիք խօ-
սէին տակաւին. այլ ոչ տային սայլին
յառաջել, և ստիպէին զմեզ իջնել 'ի
հիւրս:

Եայնժամ ասեմ ցլոր. Աստիկ ժամ
փորձելոյ զոտս մեր: Եւ իջաք հան-
դարտիկ 'ի սայլէն, իբր թէ լնուլ ըզ-
կամս նոցա. և ընդ կոխել մեր գերկիր,
սրացաք 'ի բաց ամենայն զօրութեամբ:
Զհետ ընթացան նոքա իբր ոչ թէ 'ի
բախիւն. այլ զաղաղակ հարեալ, և հը-
նարեալ հատանել զանցս մեր, և դար-
ձուցանել զմեզ: Ուր ուրեմն չնչասպառ-
նուազեալ մերձ 'ի զլորել, տեսիլ ինչ
անակնկալ կենդանացոյց զմեզ վերքս-
տին, տեսիլ անգղիացի պահակերի:
Այլ ևս վազ մի, և անկանէաք 'ի սահ-
մանս զինուց մերոց:

Եայնժամ հարցի զՀարրի, և ասեմ.
Եւ զի ոչ սպանին զձեզ՝ սպառազէն
իսկ հասեալ 'ի վերայ ձեր: Ասէ. Ոչ
այդպէս տան ձենք զանձինս 'ի գործ:
Մօտ 'ի բանակ մեր ոչ կամէին ընդ-
աղմուկ, և գիտէին զի արք յուսահատք
հզօրագոյն կուտին. և զի մարթէր քնա-
սել յոգունց 'ի նոցանէ: Ոչ այդպէս.
այլ խնդրէին ամել զմեզ 'ի հիւրս,
և անդ լռելեայն և գիւրաւ խողխողել
զմեզ:

Կրկնեցի անդրէն և ասեմ. Հարկ
լեալ իցէ քեզ յետ այնքան տառապա-
նաց քոց հանգչել առ ժամանակ մի
առ 'ի զօրանալ: Պատասխանի արար
Հարրի. Ոչ ամենևին. ոչ գոյր պարապ:
Վաղիւ իսկ վերատին էր ինձ երթալ
ընդ հրեյտակս 'ի փեքին. և կարգաւ-
րել զպայմանս խաղաղութեան: Ապա.
քէն ուղեկցեր մեզ այս անգամ հզօր
գունդ զօրաց. այլ խոտտովանիմ զոյգս
անձին ընդ մերձենալ իմ գարձեալ 'ի
քաղաք անդր: Մի 'ի պայմանաց, զոր
պահանջէր Հոպ Գրանտ, էր և այն՝ զի
տացի 'ի բաց՝ մի 'ի դրանց քաղաքին.
խոնարհութիւն, զոր բացէ 'ի բաց մեր.
ժէին ձենք: Եւ անխեղաք զպայմանէ
առ միմեանս. և Հոնքի ինքնին եւ տե-
սանել զիս, և խօսել զխնդրոյն: Ի յայտ
եկն յայնժամ առ ինչ վերծուցեալ նո.

րա զմեզ. զի յուսայր հայթայթել 'ի ձեռն մեր զթողութիւն ամօթապարտ պայմանին. և հայթայթանաքն՝ մեծաւորոյ լինել քաղաքացեաց իւրոց: Այս արագաւ սկսաւ յուշ առնել ինձ, զի նմա պարտեաք զկեանս մեր. և 'ի փոխարէն այնորիկ՝ էր նորա գուզնաքեայ, կարի գուզնաքեայ խնդիր մի յինէն, 'ի բանի առնել զսպարապետ մեր՝ զի թողցէ զպայման մատնութեան զրան քաղաքին: Խոստացայ առաջի առնել սպարապետին զաղերս նորա. այլ յաւելի համարձակ թէ ես անկար էի ամենին, և թէ ոչ գոյր տեղի և ոչ խուն մի ակնկալութիւն լրման աղերսին: Յայս բան 'ի բարկութիւն բողբալ Հոնքի, կարդաց ինձ պամենայն անուան թշնամանալիցս գտեալս 'ի բառագիրս ճննաց, և մեկնեցաւ մոլեգին:

Հանդիպեալ էաք միմեանց ոչ ինչ հեռի 'ի հիւղից անտի՝ զորոց ասացի. և չե իմ 'ի բացեայ լեալ 'ի վայրէն, եւ լին ոմանք 'ի ծառայից նորա 'ի միջոցէ, զկուրծս կոծելով. և գուժեղով մեծաձայն թէ խեղդ ընդ անձն արկեալ էր տեառն իւրեանց: Ի բանից աստի անկայ ես 'ի կառկած աստիկ զնորա. հնար ինչ գաւգ. այլ խորհեցայ գառնալ յետս 'ի քնին լրոյն. վասն որոյ առեալ զերկուս յարանց իմոց ընդ իս,

պատուէր ետու պլոցն կալ ուր էին. և 'ի ճայթիւն հրազինու դիմել անդր անդէն, և ողբ 'ի բռին խորտակել ըզգուռն: Յայնժամ հրազինակ 'ի ձեռին դարձայ և մտի 'ի հիւղ անդր:

Եւ արդարեւ գտաք յետոյ զրան կախեալ զհէքն Հոնքի. այլ զի թուեցաւ ինձ տակաւին ոչ մեռեալ 'ի սպառ, հա աի ես ինձէն զյուան խեղդի նորա. և խրատ ետու ծառայիցն զիարդ 'ի ըզգաստութիւն դարձուցանել զնա: Յինքն եկն Հոնքի. և այսպիսի նորանշան եղանակաւ զէպ եղև ինձ տալ նմա ըզկեանս ընդ կենաց:

Որ ինչ յաջորդեցին անցք՝ գրեալ են 'ի պատմութեան: Յամառէին այնդէին ճինք, մինչև ոչ ևս ժուժկալել Գրանտայ, և յայտնել նոցա՝ զի թէ ոչ զիջանէին մինչև ցերկոտասան ժամ վաղուին, կործանէր զքաղաքն հրազինութիւն վաղիւ. եղև ժամ մեծասան, եղև և մեծասան և կէս. և տակաւին չերէր նշան: Յայնժամ խաղացոյց Գրանտ ըզհրետս իւր. և կացոյց զնոսա հանդէպ զրան քաղաքին: Մնային երկոտասան ժամուն այլ ևս վայրկեանք հինգ. յորժամ ել այր ոմն, զրօշակ սպիտակ 'ի ձեռին. և դուռն քաղաքին տուաւ 'ի մեզ:

Թարգմանեաց

ԽԱՉԻԿ ԱՐԲԱՆՍԻՐԻՍԿԻԱՍ

Ի ՍՍՄԱՐԱՆԳ

